



**«ՄԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ՝** Նահանջն ազգային ավագանից Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպում

**ԱՌԱՐԿԱ՝** «Հայոց լեզու և գրականություն»

**ՀԵՂԻՆԱԿ՝** Գարնանուշ Աբրահամյան

**ՂԵԿԱՎԱՐ՝** Արմինե Ղազարյան

**ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝** §ՀՀ Գեղարքունիքի մարզի

Գեղամավան գյուղի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց»

**ՊՈՍԿ**

## Բովանդակություն

Ներածություն-----	3
Կարոտի և նահանջի գրականություն-----	4
Նահանջն ազգային ավագանից Շահան Շահնուրի « Նահանջը առանց երգի» վեպում-----	7
Եզրակացություն-----	19
Օգտագործված գրականություն-----	20

## Ներածություն

Մեր ուսումնասիրության **նպատակն** է ներկայացնել Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի գլխավոր հարցադրումները.

ա. Շահան Շահնուրի հնչեցրած նահանջի ահագանգը՝ ուղղված աշխարհասփյուռ հայությանը՝ որպես սթափության և զգոնության կոչ


բ. օտար ավեր նետված տարագիր հայի ազգային ավազանից քայլ առ քայլ հեռացումն ու ուժացումը

գ. օտար միջավայրում հայի ճակատագրի բացահայտումը՝ տարագիր, անընտել կեցությամբ, օտար միջավայրի, բարձր և քաղաքակրթության յուրացման վարժությամբ և անվարժությամբ, հայեցի տեսանելի և անտեսանելի բարդույթներով:

Մեր նպատակները ներառում են գրեթե բոլոր անհրաժեշտ կոմպլեքսները՝ մշակութային, լեզվական և գրագիտության, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, սովորել սովորելու...

Մեր ուսումնասիրությունն ունի **արդիական** նշանակություն, քանի որ այսօր էլ մենք տեսնում ենք մեր կողքին ապրող նահանջող բազմաթիվ հայերի: Հայ երիտասարդը ամուսնանում է օտարի հետ, ընդունում օտարի սովորույթներն ու ավանդույթները: Ժամանակակից երևալու համար շատ շատերն իրենց բռնապաշարում գործածում են օտար բառեր՝ bye-bye, merci, please, ok, naka... Ավանդական հայկական անուններն իրենց տեղը զիջում են օտար անուններին՝ Ալեքս, Էմիլի, Ալեն, Մարկ, Էլեն... Շատերը տոնում են օտարամուտ տոներ՝ Մուրբ Վալենտին, Հելոին... Դիտում օտար ֆիլմեր և ընդօրինակում այդ ֆիլմերի հերոսներին:

«Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի. եղան ուրիշներ, որոնք տուին հաւատք, կուսութիւն. եղան անոնք, որոնք լքեցին տուն, տեղ, երկինք. եղան դեռ վատեր, որ ուրացան ազգ ու լեզու. Եւ հերոսներ, որ տուին արիւն, կեանք, օր ու արեւ: Իսկ մե՛նք, կը վճարենք իբրեւ վերջին փրկագին այն, որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ. ապագայի սերունդներ, որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ այն, որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»...



## Կարոտի և նահանջի գրականություն

Միյուրքահայ գրականությունը հենց սկզբնական շրջանում զարգացավ երկու ուղղությամբ՝ կարոտի գրականություն և նահանջի գրականություն: Կարոտի գրականության կողմնակիցներն իրենց հայացքն ուղղում էին դեպի անցյալը, ապրում էին անցյալի հիշատակներով: Նրանք փորձում էին վերականգնել կորսված միջավայրը, բարձրացնում էին հիշատակի պատկերներ, անցյալը ներկայացնում էին վարդագույն շղարշի ներքո: Կարոտի գրականության նշանավոր դեմքերից են ամերիկահայ դպրոցի հիմնադիրներ Համաստեղը՝ «Գյուղը», «Անձրևը», «Քաջն Նազար և 13 պատմվածքներ» ժողովածուներով, Բենիամին Նուրիկյանը՝ «Այգեկութք»-ով և հետագա ժողովածուներով, Վահե Հայկը՝ 1935-ականներից սկիզբ առնող «Հայրենի ծխան» պատկերների հինգ հատորով, Արամ Հայկազը՝ 1950-1960-ական թթ. հրատարակած «Ցեղին ձայնը», «Պանդոկ», «Ապրե՛ք, երեխե՛ք», «Կարոտ», «Երջանկություն» ժողովածուներով, 1972 թվականին լույս տեսած «Չորս տարի Քուրդիստանու լեռներուն մեջ» վեպով, Անդրանիկ Անդրեասյանը՝ անգլերենով հրատարակած «Փլուզում և վերածնունդ» վիպաշարով, Հակոբ Ասատուրյանը՝ «Հովակիմի թոռները», «Հովակիմի թոռնորդիները», «Տո՛ւ լաճ, տնավեր» վեպերով: Ստամբուլում Հակոբ Մնձուրին էր, ով իր «Արմտան», «Կապոյտ լոյս», «Կռու՛նկ, ուստի՞ կու գաս» ժողովածուներով եզրագծեց Կապույտ Երզնկայի պատկերը: Փարիզում՝ ԼԱՍ-ը /Լուիզա Սալանյան/, Սեման, Բյուզանդ Թոփալյանը, Շավարշ Նարդունին և Վազգեն Շուշանյանը: Մերձավոր Արևելքում կարոտի գրականության ուղենիշներն իրենց ստեղծագործություններում արտացոլեցին Անդրանիկ Ծառուկյանը իր «Մանկություն չունեցող մարդիկ» և «Երագային Հալեպը»

վիպակներով, Վահե Վահյանը, Ժակ Հակոբյանը և ուրիշներ: Ի տարբերություն կարոտի գրականության ուղղության՝ անցյալապաշտության հետևորդների, նահանջի գրականության կողմնակիցները 20-րդ դարի 20-ական թվականների վերջերից հրաժարվեցին ազգային նահապետական գրական ավանդույթներից և ձգտեցին բացահայտել այն մարտահրավերները, որոնց առջև կանգնած է Սփյուռքի հայությունը և ուժացման վտանգից հնարավոր ելքեր փնտրել: Շահան Շահնուրի հերոսը հրապարակում է «Ես անցեալէս բարձր»<sup>1</sup> կարգախոսը և դրանով արդեն Շահան Շահնուրը և «Մենք» խմբագրական մարմնի շուրջ համախմբված Փարիզի տղաքը՝ Զարեհ Որբունի, Հրաչ Զարդարյան, Բյուզանդ Թոփալյան, Շավարշ Նարդունի, Նիկողոս Սարաֆյան և ուրիշներ, իրենց հայացքն ուղղեցին իրական կյանքին, փորձեցին սթափ հայացքով քննել սփյուռքյան նորօրյա թնձուկը: Նահանջի գրականության շարժման առաջնորդը Շահան Շահնուրն էր՝ իր «Նահանջը առանց երգի» վեպով: Հենց վեպի խորագրի ծրագրային նշանակությամբ էլ շարժումը կոչվեց նահանջի գրականություն: Այն միտված էր սթափեցնելու օտար ավերում դեգերող հայորդիներին, նրանց ուժացումից փրկելու և ետ վերադարձնելու ազգային ավազան: Սուրեն Դանիելյանը նշում է. «Աւելի լայն առումով Կարօտի եւ Նահանջի բախումն արտայայտում էր մեր գրականութեան մէջ հնուց եկող վէճը իրապաշտական և ռոմանտիկական հայացքների շուրջ: Ուշադրութիւն դարձնենք, որ, եթէ տասական թթ. մեհենականները ձգտում էին հա՛յ ոգու փնտռութիւն, ազգային «հեթանոս» աւազանի մէջ գեղեցիկի ու ազատութեան խորհուրդները յայտնաբերելուն», «մենքեան» շարժումն այլևս ապաւինում էր համաշխարհայի՛ն գրական միասնական ընթացքին՝ նրա մէջ որսալով ազգային գեղագիտական հասունացման «ահեղ ճշմարտութիւնը»:<sup>2</sup> Եթե կարոտի գրականությունը դիմում էր անցյալապաշտությանը, ռոմանտիզմին, ապա նահանջի գրականությունը հայացքը շրջում էր դեպի ներկան, դեպի իրապաշտություն: Մենք տեսնում ենք տարագիր հային օտար միջավայրում՝ իր տարբեր բարդույթներով. քայլ առ քայլ պատկերվում է ուժացումը: Նահանջի գրականությամբ սփյուռքահայ գրողը զննեց և փորձեց վերլուծել տարագիր հայության կյանքը, ինքն իր ու իրենից դուրս ելնող հանգամանքների մեջ: Ուժացման վտանգն ավելի խորապես զգացին նոր սերնդի գրողները իրենց իսկ կյանքի ընթացքով, իրենց սերնդի օրինակներն ունենալով աչքների առաջ: Ուժացման հարցը դարձավ սփյուռքում ապրող հայերի հարցերի հարցը: Գրեթե բոլոր արձակագիրները անդրադարձան ուժացման վտանգի հարցին: Այն ուղին, որով անցնում էր սփյուռքահայությունը, հարցականների մի շղթայի էր նման և այդ շղթայից դուրս գալու համար պետք էր ելք գտնել: Շահան Շահնուրն ու նահանջի շարժման կողմնակիցները ականատեսն էին սփյուռքահայի ներկայի և մտահոգված էին տարագիր հայի ճակատագրով, կանխագգում էին մոտալուտ վտանգը, ինչը օտար

<sup>1</sup> Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, գիրք առաջին, «Նահանջը առանց երգի», Երևան, 1982թ., էջ 117:

<sup>2</sup> Սուրեն Դանիելյան «Միջուկի տրոհումը», Սփյուռքահայ գրականութեան պատմություն, գիրք 1, էջ 171:

ափերում ապրող հային տանում էր ինքնատչնչացման: Նրանք չէին կարող անտարբեր, աննկատ անցնել ուժացման երևույթի կողքով, այդ իսկ պատճառով իրենց ահազանգն հնչեցրին՝ փորձելով հետ պահել սփյուռքահային օտար վարք ու բարքից, կենցաղից և սովորություններից:

## Նահանջն ազգային ավազանից Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպում

Նահանջի շարժման առաջնորդ Շահան Շահնուրը 1929 թվականին հրատարակեց իր «Նահանջը առանց երգի կամ պատկերազարդ պատմություն հայոցը»: Երկունս էլ խոսուն վերնագրեր են: Շահնուրն առաջին վերնագրով գուժում է սփյուռքահայության նահանջի վտանգը, իսկ երկրորդով՝ տալիս է տարագիր հայի պատմությունը: Նա ֆրանսիական դասական վիպագիրների հունով էր ուզում վերակերտել իր ժողովրդի «պատկերազարդ պատմությունը», բայց կարծում էր, որ այն հետաքրքրական է միայն վերջին հարյուր տարվա կտրվածքով: «Նահանջը առանց երգի» վեպի ստեղծման կապակցությամբ հետաքրքիր է Շահան Շահնուրի նամակը ուղղված Միսն Վրացյանին, որտեղ նա նշում է վեպի ստեղծման շարժառիթը. «Քիչ մըն ալ Թեոդիկ պատճառ եղած է, որ գրուի Նահանջը: Ան նախապէս սահմանուած էր կարճ պատմուածք մը ըլլալու /«Տարեցոյց»ին համար/, բայց Թեոդիկի մահէն /1928/ վերջ գիտցածիս պէս ըրի եւ երկը եղաւ վէպ: Ուրեմն սկսած էր գրուիլ, երբ 24 տարեկան էի»:<sup>3</sup> Շահան Շահնուրը նշում է, որ իր «Նահանջը առանց երգի» վեպը խորքային առնչություններ ունի Տուրգենևի «Հայրեր և որդիներ», Գուստավ Ֆլոբերի «Զգացմունքների դաստիարակություն», Թոմաս Հարդիի «Աննկատելի Ջուդը» վեպերի հետ: Նկատենք, որ Իվան Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպում ներկայացված է սերունդների բախումը. գաղափարապաշտ նորեր /որդիներ/ և բարեփոխումների դեմ ընդդիմացող հներ /հայրեր/: Գուստավ Ֆլոբերի «Զգացական դաստիարակությունը» վեպում պատկերված է 1948 թվականի Ֆրանսիական հեղափոխության շրջանը: Միակողմանի սիրո պատմություն է: Տասնութամյա երիտասարդը սիրահարված է ամուսնացած տարեց կնոջ: Վեպում պատկերված է հեղինակի սերնդի ձախողումն իր իդեալը իրականացնելիս: Թոմաս Հարդիի ստեղծագործության մեջ ներկայացվում է հոգևոր և մարմնավոր կյանքի ընդհարումը: Մեր կարծիքով վերոնշյալ գրողներին և Շահան Շահնուրին միավորում է իրապաշտությունը: Նշենք, որ և՛ Շահան Շահնուրի, և՛ նշված հեղինակների ստեղծագործությունները ունեն դարակազմիկ նշանակություն: Շահան Շահնուրն առաջին անգամ «Նահանջը առանց երգի» վեպը, որպես թերթոն, մաս առ մաս հրատարակեց Շավաշ Միսաքյանի «Հառաջ» թերթում /1929թ. մայիս-սեպտեմբեր/: Վեպում նահանջի գրական ուղղության առաջնորդը հնչեցրեց իր ահազանգը սփյուռքում ապրող սփյուռքահայի գլխավոր վտանգի՝ օտարացման և ուժացման դեմ: Շահնուրը գիտակցում էր, որ ծանրագույն աղետն անխուսափելի էր: «Ոչ թե որովհետև այժմ պատերազմ կա ու կռիվ, ոչ թե որովհետև այժմ ճակատամարտ կա ու կենսապայքար, այլ որովհետև կա բան մը ավելի ճակատագրական, ավելի աններող, կա բան մը ահեղ, անդիմադրելի, որ իր անունը կոռնա բոլոր քառուղիներեն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը հայերուն: Կռիվը

<sup>3</sup>Շահան Շահնուր , Նամականի , կազմեց, խմբագրեց, ծանօթագրեց Գրիգոր Քեօսէեան, ԱՄՆ, 2006թ., էջ 7:

սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նույնիսկ օգտակար. անոնցմե ազգ մը դուրս կուգա պարտված կամ հաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգա: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտույտ տվող զառիթափին վրա սա նահանջը կջնջե, կձուլե, կանհետացնե ամեն բան»: <sup>4</sup> Գրողը նպատակ ուներ ոչ թե հաշտեցնել սփյուռքահային իրականության հետ, այլ սթափեցնել, որպեսզի նա պայքարի արատավոր երևույթների դեմ և չհնազանդվի, ի վերջո, կամքի ուժ գտնելով իր մեջ, վերադառնա ազգային ավագան: Սփյուռքահայ գրականության հերոսն ու հեղինակը հաճախ ի վիճակի չեն լինում դուրս գալ փակուղուց: Ինչպես նկատել է գրականագետ Սուրեն Դանիելյանը «Հայակենտրոնը դեռ էլք չէ, հայօրէն ապրելու հեռանկարը մշուշոտ է. ամերիկահայը ամերիկանալու ճանապարհին է, նոյնը՝ ֆրանսահայը, արգենտինահայը, եւ այսպէս շարունակ»: <sup>5</sup> Եւ ճիշտ ժամանակին էր վեպի հրատարակումը: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը արդիական է և կարող էր գրվել այսօր Հայաստանում, բայց գրվեց այլ իրողության մեջ: Այն իրողության, որի մեջ Շահան Շահնուրն էր: Եվ նահանջի գրականության ուղենիշը գծագրող Շահնուրն ականատես էր լինում, թե ինչպես են քայլ առ քայլ նահանջում ծնողը, որդին, քեռին, փեսան, բարքերը, բարոյականությունն ու սերը: Եվ ի լրումն ամենի՝ ահազանգում է, որ սփյուռքահայը նահանջում է ոչ միայն ազգայինի ավագանից, այլև փոխվում են բարոյական ընկալումները, ցավով է նշում, որ իրենց վճարվելիք փրկագնի դիմաց եկած սերունդները այլևս օտար են լինելու և կարողում է իր մեղայականը հայ ժողովրդի հարատևությունը խորհրդանշող սրբազան լեռանը՝ Արարատին: «Իսկ մե՛նք կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, ովքեր մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին»: <sup>6</sup> Նշենք, որ նահանջի ահազանգը հնչեցնող Շահան Շահնուրն էլ մի նահանջող հոգի էր, ամենից երկատված գրողը սփյուռքահայ գրականության մեջ, երկատված՝ նաև լեզվով: Շահան Շահնուրը, ով նահանջի գրականության առաջատարն էր, անցավ օտարագրության և հանդես եկավ Արմեն Լյուբեն ստորագրությամբ: «Նահանջը առանց երգի» վեպում Սուրենի կերպարի միջոցով, կարծես կանխելով իրադարձությունները, գրողն ուրվագծում է իր վաղվա քայլը՝ օտարագրություն: Շահնուրի կենսագիր Գրիգոր Շահինյանն հայտարարում է. «Շահնուր սկսած է ֆրանսերէն գրել Ֆրանսա հաստատուելէն անմիջապէս ետք»: <sup>7</sup> Արմեն Լյուբենի բերած նյութը ֆրանսիական գրականություն անձնական է՝ ֆիզիկական ցավ, հիվանդանոցային կյանք: Մարդկային հոգու ճշմարիտ պատկերն էր նկարագրված իր

<sup>4</sup> Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, գիրք առաջին «Նահանջ առանց երգի», Երևան 1982 թ, էջ 109:

<sup>5</sup> Սուրեն Դանիելյան, «Միջուկի տրոհումը», Սփյուռքահայ գրականության պատմություն, Երևան, 2011թ., էջ 184:

<sup>6</sup> Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, գիրք առաջին «Նահանջ առանց երգի», Երևան 1982 թ, էջ 110:

<sup>7</sup> Գրիգոր Շահինյան, «Կենսագրություն եւ մատենագիտություն Շահան Շահնուրի», Անթիլիաս, 1981թ., էջ 24:



արձակ էջերում և իրական կյանքի զգայական պատկերը՝ բանաստեղծություններում: Նա ուժ գտավ բացահայտելու իրեն օտարագիր գրականություն դրող հանգամանքները և այն շվարուն վիճակը, որի մեջ «Նահանջի...» հերոսի պես ընկել էր ինքը՝ դիմելով ֆրանսերենին: Նշենք նաև, որ 1936-1958 թվականը Շահնուրն հեռացած էր հայ գրականությունից: 1959 թվականին, հաստատվելով Սեն-Ռաֆայելի հայկական տանը, նա կրկին ոգևորվում է հայ գրական կյանքով:

Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպն արժանացել է գրականագետների կողմից բարձր գնահատանքի: Ամենից շատ վեպն արժևորել է Նշան Տեստեկյուրը. «Նահանջը» նորերուն մեջ եղավ առաջինը, վեպ մը որուն միջոցով չափազանցություն թող չըլլա, հայ գրականությունը նոր մուտք մը կգործե եվրոպական գրականության մեջ: Ան կբանա նոր շրջան մը ոչ միայն մեր վիպագրության, այլ նաև մեր ամբողջ գրականության համար»: <sup>8</sup> Իսկ Անդրանիկ Փոլատյանը հայտարարեց. «Նահանջը Առանց Երգին» Սփյուռքին Նարեկն է»: <sup>9</sup> Շահան Շահնուրը իր գիրքը նվիրել է իր բարեկամ Հակոբ Տեր-Հակոբյանին: Իբրև «Նահանջը առանց երգի» վեպի բնաբան՝ Շահնուրը վերցրել է Ղուկասի ավետարանից երկու հատվածներ, որոնք ունեն իրենց խորհուրդը. եղեռնի սարսափ, մազապուրծ փրկված, մոխրից հարություն առած տարագիր հայ և իր անցնելիք ուղին՝ նորօրյա բարդույթներով հանդերձ: Բարդույթներ, որոնք իրենց հորձանքի մեջ խեղդելու էին սփյուռքահայի գալիք սերունդին: Մեջբերենք բնաբանները՝ «Եւ ամենայն ժողովուրդքն, որ եկեալ էին, եւ տեսանէին զտեսիլն զայն եւ զգործ, բախէին զկուրծս եւ դառնային»: Ղուկ. ԻԳ 48

«Եւ ասէ /Յիսուս/ ցնոսա.զի՞ խռովեալ էք եւ ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք զձեռս իմ եւ զոտս. զի ես նոյնն եմ. շոշափեցէ՛ք զիս եւ տեսէ՛ք,զի ոգի՞ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զի տեսանէք զի ունիմ: Եւ այս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտս»: <sup>10</sup> Ղուկ.ԻԴ 38,39

Մեր կարծիքով, Շահնուրը, իբրև բնաբան ընտրելով աստվածաշնչյան այդ տողերը, ցանկացել է կույր ու գուլ մարդկությանը սթափության կոչ անել: Երիտասարդ Շահնուրն իր հայացքը սևեռեց ներկա կյանքին, քննեց ու վերլուծեց այն նոր գոյավիճակը, որ թելադրված էր սփյուռքահայությանը: Ժողովուրդը սիրեց այս վեպը, որովհետև նրա մեջ տեսավ իրեն, այդ հերոսների ներաշխարհում կարդաց իր խոհերը, ճանաչեց իրեն և հասկացավ, թե նահանջի և ուժացման ճանապարհը որքան ուղիղ է ձգվում, որքան հեշտ է սայթաքելը: Ցավով պետք է նշենք, որ այսօր էլ նահանջը իրողություն է: Ցավոք, նահանջում է ոչ միայն սփյուռքահայը, այլև մայր հայրենիքում ապրող հայը: Իսկ արդարացում ունի՞ հայի նահանջն իր հայրենիքում՝ Հայաստանում: Եթե ինչ-որ տեղ արդարացնում ենք սփյուռքահայի նահանջը՝ նկատի ունենալով օտար միջավայրը, օտար վարք ու բարքի հորձանուտում կորչելը, օտար

<sup>8</sup> «Հայրենիք», 1929, ը տարի, դեկտեմբեր, համար 2, էջ 132:  
<sup>9</sup> Անդրանիկ Լ. Փոլատյան, «Շահան Շահնուր», Նյու Ջերսի, 2003թ., էջ 26:  
<sup>10</sup> Շահան Շահնուր, «Նահանջը առանց երգի», Դ. տպագրութիւն, Պէյրուք, 1981թ.:

ազդեցությունների ներքո ընկրկելը, ապա հայրենիքում ապրող հայը պետք է ամուր կառչի իր մայր հողից և նրա նահանջը դատապարտելի է: «Նահանջը առանց երգի» վեպի հերոսներից շատերը մեզ հանդիպում են նաև այսօր: Հայ աղջիկը, հայ տղան ամուսնանում է օտարի հետ, ընդունում օտարի սովորություններն ու ավանդույթները: Կամ ամեն քայլափոխի հանդիպում ենք օտար անուններով հայ երեխաների: Հայկ, Տիգրան, Թորգոմ անուններն արդեն դիտվում են ոչ ժամանակակից և վաղուց իրենց տեղը զիջել են Մարկ, Ալեն և նմանատիպ անունների: Ժամանակակից երևալու համար շատ շատերը տոնում են հային ոչ յուրահատուկ տոներ՝ Սուրբ Վալենտին, Հելոին... Կամ հաճախ և՛ մեծահասակների, և՛ հայ մանուկների շուրթերից լսում ենք bye-bye, mersi, please, ok, naka և նման արտահայտություններ: Եւ տեղին է դարձյալ հնչեցնել Շահնուրի խոսքերը. «Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եւ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտութեամբ. մեղա՛, մեղա՛ Արարատին»:<sup>11</sup>

Սփյուռքահայ գրականության մասին խոսելիս Գևորգ Աճեմյանը նկատում է. «Գրագետը իր կարգին պիտի դնե իր շունչը, պիտի դրոշմե իր գործին մեջ իր անհատականությունը. տիպարները վերցնելով իրական կյանքէ պիտի օժտե զանոնք զիրենք սովորականէն զանազանող յատկութիւններով: Պիտի ըլլան անոնք ուշագրաւ, ինքնատիպ, եւ եթէ կարելի է, իրականէն բան մը աւելի կամ պակաս-չափազանցելով եւ յստակեցնելով անոնց առաքինութիւնները կամ թերութիւնները: Անոնք պետք է ապրին ընթերցողին միտքին մեջ՝ իրենց նկարագիրներով, տկարութիւններով, յաղթանակներով եւ դժբախտութիւններով: Պետք է ըլլան եւ մնան կեանքի ճշմարտութիւնները յստակեցնող սեմպոլներ»:<sup>12</sup> Կարծում ենք ճիշտ այդպիսի գրող է Շահան Շահնուրը, նրա կերպարները վերցված են իրական կյանքից և եղել ու մնում են կյանքի ճշմարտություններն արտացոլող իրական սիմվոլներ և՛ հայրենիքում, և՛ հայրենիքի սահմաններից դուրս՝ սփյուռքում: «Ազգին ապրեցնելու, նրա մեջ կայծ ներարկելու մտահոգությունը, հայ կյանքի անցյալն ու ներկան նորից ու նորից վերագնահատելու սևեռումը Շահնուրին հանգիստ չի տվել ինչպես վեպը գրելու ընթացքում, այնպես էլ նրանից հետո»<sup>13</sup>, - նկատել է գրականագետ Արծրուն Ավագյանը: «Նահանջը առանց երգի» վեպի հերոսները տարագիր հայ տղաներ են՝ Պետրոս, Սուրեն, Հրաչ, Միսաք, Լոխում, ովքեր ընկել են փարիզյան թոհուրօհի մեջ: Շահնուրը, մանրակրկիտ քննելով յուրաքանչյուրի էությունը, քայլ առ քայլ բացահայտում է օտար միջավայր ընկած հայի ճակատագիրը. ի՞նչ է սպասվում նրան, ներկան տարտամ էր, իսկ ապագան՝ անորոշ: Ինչպիսի՞ն էր լինելու տարագիր հայի

<sup>11</sup> Շահան Շահնուր, Երկեր երկու գրքով, զիրք առաջին «Նահանջը առանց երգի», Երևան, 1982 թ, էջ 110:

<sup>12</sup> Գեորգ Աճեմեան «Տեսական քննադատական փորձեր», Պէյրուք, 1962 թ., էջ 96:

<sup>13</sup> Արծրուն Ավագյան «Ազգային վարքագծի հորձանուտում», Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 3, 2000 թ., էջ 23:

ճակատագիրը: Ահա այս հարցերն էլ դարձան Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի առանցքը: «Նախկին արևմտահայը այժմ ֆրանսիացի էր, լիբանանահայ..., սփյուռքահայ և պարտադրված էր ապրել նոր ապրելավայրի օրենքներով: Գրականության հերոսը պիտի դառնար իր գոյատևության համար տքնող, անկամորեն ուժացող կամ ուժացման վտանգի դեմ պայքարող, կորցրած հայրենի տան կարոտից տառապող ու վերադարձի հույսը փայփայող տարագիր հայը՝ իր ճակատագրի մասին մտատանջող խոհերով»<sup>14</sup>, - նկատել է Վազգեն Գաբրիելյանը: Նշենք, որ հենց այդպիսին են Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի հերոսները: Նրանք՝ Փարիզի մայթերն ընկած պոլսեցի հայ տղաները, գրեթե նույն ճակատագիրն ունեն. նրանք, ինչպես վերը նշեցինք, կամա, թե ակամա, գիտությամբ, թե անգիտությամբ նահանջողներ են: Նրանք հայկականից անցում կատարեցին օտար ավագան և այդ անցումը կատարվեց աննկատ, սահուն: Ինչ-որ տեղ պոլսահայ տղաների նահանջը արդարացնում ենք. տեղահան եղած հայեր, կորցրած ծննդավայր, լավկանության հուշեր, իսկ առջևում փարիզյան կյանք՝ իր բոլոր հրապույրներով, սիրով և գորովով առլեցուն: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը բաղկացած է երեք մասից, որտեղ քայլ առ քայլ բացահայտվում է Պոլսից Փարիզ ընկած հայ տղաների փարիզյան կյանքը՝ ուժացում տանող իր բոլոր ուղիներով: Վեպի հերոսները, ինչպես նշեցինք, Փարիզի մայթերը նետված տարագիր հայ տղաներ են՝ Պետրոս, Սուրեն, Հրաչ, Լոխում, Միսաք, ինչպես նաև բարոյական չափանիշներից զուրկ ֆրանսուհիներ՝ Նենեթ-մադամ Ժան, Սյուզի, Գաբի, Լեսքյուռ, որոնց միջոցով, նրանց օգնությամբ տեղի է ունենում ազգային նահանջը: Վեպի հենց սկզբից հեղինակը մեզ նախապատրաստում է հայ երիտասարդների նահանջին: «Նավուն ետևի կողմն էր. իր և Պոլսո միջև ֆրանսական դրոշակը կար հիմա. ավելի վերջ, երբոր այդ երեք գույները իջեցուցին, Պոլիսը կորսված էր ինչպես կկորսվի աճաբարի մը թաշկինակին տակ առասպելական դրամ մը: Հոս կավարտվի պետություն մը, ու վերջնականապես կթուլանա թաթը տղուն պատկանած ազգին: Մեկնող երիտասարդը իր երակներուն մեջ կտանի միայն արյուն մը մաքուր ու առողջ, ինչպես այն երկինքը, որուն տակ իր առաջին շրջանն էր սկսեր»:<sup>15</sup> Վեպում Շահան Շահնուրը տվել է սփյուռքահայ կյանքի ժամանակակից պատկերը, հասարակական և ազգային երևույթների նկատմամբ ունի իր հստակ մոտեցումները, բացահայտել է կյանքի ճշմարտությունները: Ա. Դարյանը նկատում է. «Նահանջը իր առաջին էջեն մինչև վերջին տողը մարտահրավեր մըն է, ուղղված մեր բոլոր Թովմասներուն, հայ կյանքի բոլոր կամավոր խուլերուն և կույրերուն ճանչնալու, շոշափելու ճշմարտություն, ինչքան էլ դառն ըլլան անոնք»:<sup>16</sup> Պոլսից Փարիզ ընկած հայ երիտասարդներից յուրաքաճյուրը նահանջում է յուրովի: Անսահման սիրով և գորովով իրար հետ կապված երիտասարդների շարքերը քիչ-քիչ նոսրանում են:

<sup>14</sup> Վ. Գաբրիելյան «Սփյուռքահայ գրականություն», Երևան, 1994թ., էջ 105:

<sup>15</sup> Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982 թ., էջ 11:

<sup>16</sup> Շահնուրյան ընթերցումներ, Բեյրութ, 1933թ., էջ 50:

Հավաքականությունը վերածվում է անհատների, ովքեր կամա թե ակամա ընկնում են ուժացման հորձանքի մեջ: Ուժացման երևույթին Շահնուրը ցավով է արձագանքում. «Հոն թե հոս, հաղթանակը միշտ նույնը մնաց. միշտ նույն Նենեթը, Մանոներու, Նինոներու, Նանաներու թոռնուհին: Ոմանք ամուսնացան, շատեր ապրեցան բարեկամուհիներով, պարավեցավ Հայոց եկեղեցին, մեկնող նամակներու թիվը նվազեցավ և, անշուշտ, հեռուն մայրեր լացին»: <sup>17</sup> Վեպի սյուժեի հիմքում ընկած է Պիերի և Նենեթի սիրո պատմությունը, հենց այդ պատմության միջոցով էլ Շահնուրը բացահայտում է Պետրոսի նահանջը: Նկատում ենք նաև Պիեր-Նենեթ-Լեսքյուռեանկյունին՝ իր բոլոր վայրիվերումներով: Պետրոսը գիտակցում էր իր նահանջելը: «Հապա ուրեմն մենք ինչպե՞ս պիտի մնանք հայ երբոր մեր մեռելնե՛րն ալ չունինք, երբոր մեր մեռելները հետերնիս չբերինք: Ի՞նչպես մենք պիտի չըլլանք օտար, երբոր այս մեռելը այնքան լավ ճառեց...»: Եվ կկրկնել Սուրենի խոսքերը. «պիտի ձուլվինք բոլորս ալ, պիտի ձուլվինք, դարման չկա ատոր»: <sup>18</sup> Նա տարբերվում էր իր ընկերներից: Պատրաստ էր նվիրումի և գոհաբերումի: Ցանկանում էր բոլոր փոքրոգություններից վեր ելնել և հետևել «Ես իմ անցյալես բարձր» կարգախոսին: Պետրոսը, ով իր երակներում կրում էր հայի մաքուր արյուն՝ ընկնելով փարիզյան թոհուրոհի մեջ, նահանջում է՝ տրվելով կրքերին, ինչը երևում է իր օրագրային գրառումներից՝ մադամ Լանպեր, դերասանուհի Ճիքիս և ուրիշներ: Օրեցօր նրա օրագրային գրառումներում ավելանում են ֆրանսերեն բառերը, ինչը ևս խոսում է Պետրոսի քայլ առ քայլ նահանջի մասին: Մի քանի տարի մի լուսանկարչի մոտ կատարելագործում է իր արհեստը, ապա ընդունում Լեսքյուռեի առաջարկը՝ աշխատելու նրա և մադամ Ժանի լուսանկարչատանը: Նահանջը սկսվում է հենց առաջին օրերից: Լուսանկարչատուն այցելող կանայք ստիպում են Պետրոսին վարժվել նոր բարքերին: Նա ընտելանում է նոր քաղաքին, Լեսքյուռեի լուսանկարչատանը վարժվում է նոր բարքերին՝ կորցնելով արևելքցու իր խանդավառությունը, վարժվելով փարիզյան անտարբեր, անսեր կյանքին: Պետրոսը կորցնում է նաև իր հայկական անունը: Պետրոսը փոխվում է Պիերի: Պետրոսը վերջնականապես կատարում է նահանջի իր քայլը՝ սիրահարվելով մադամ Ժանին: Առաջին իսկ հանդիպումից գայթակղվում է մադամ Ժանի գեղեցկությամբ: Առաջին գրկախառնումը վճռում է ամեն ինչ: Պետրոսն ընկնում է Նենեթի կախարհիչ և զգլխիչ որոգայթի մեջ: Վերջինս Լեսքյուռեի սիրուհին էր, վարում էր անբարո կյանք, ուներ երեխա՝ Բիբին, որին լքել էր, լուսանկարների մերկ բնորոհուհի էր: Պետրոսը, արհամարհելով ամեն ինչ, անմնացորդ սիրում է Նենեթին: Այդ սերը դարձավ Պետրոսի ուժացման և կործանման պատճառը: Գրականագետ Ազատ Եղիազարյանը, անդրադառնալով Պետրոս-Նենեթ սիրային կապին, իրավացիորեն նշում է. «Այդ սերը Փարիզի պայմաններում ծուղակ է Պետրոսի համար, որովհետև դա նրան քաշում է փարիզյան ճահիճը, սեռի ու վայելքների ազդություն չճանաչող աշխարհը, հենց այն

<sup>17</sup> Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982թ., էջ 89:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 117:

Լեսքյուռի աշխարհը, որ այդքան արգահատելի էր Պետրոսի համար»: <sup>19</sup> Պետրոսը տրվում է սրտի թելադրանքին և քայլ առ քայլ նահանջում: Օտարի ավազանը ձգում է նրան: Փոխվել էր նրա՝ գտարյուն հայի, մտածելակերպը, բարքերը, օտար միջավայրում վերանայվել էին հայացքները: Ի՞նչ փույթ, որ մայրը հեռու հեռվից բաղնիքի «տոկուն քեսե» էր ուղարկում: «Քեզի համար մասնավոր տոկուն կերպասե բաղնիքի քեսե մը կարեցի, չեվիրմեի անուշին հետ կղրկեմ... Իմին փաշա մա՛նչս, իմին...»: <sup>20</sup> Տոկուն քեսեն տոկուն Հայաստանի խորհրդանիշն էր: Մայրը հեռվից հեռու կարծես գիտակցում էր որդու նահանջը, հայության ավազանից հեռանալը և ձգտում էր Պետրոսին վերադարձնել հայության ավազան, բայց արդեն ուշ էր: Պետրոսը մոռացել էր և՛ հայրենիքը, և՛ իրենց պարտեզը, և՛ փոքրիկ աղջկան, որին սիրում էր: Թեև Նենեթի ու Պետրոսի սերը փոխադարձ է, բայց Նենեթը վերադառնում է իր կյանքը խորտակած, իրեն շահագործած Լեսքյուռի մոտ, որի հետ կապված է անցյալով: Հիասթափությունը Պետրոսը փորձում է խեղդել ընկերական շրջապատում, սակայն այդտեղ ևս մխիթարություն չի գտնում: Պատահաբար նա իմանում է Նենեթի անբարո անցյալի մասին: Սակայն սիրո առեղծվածն անբացատրելի է: Պետրոսը չի կարողանում հրաժարվել Նենեթից: Սկզբում փորձում է կապերը խզել Նենեթի հետ: Նա վաճառում է ունեցվածքը, տեղափոխվում ուրիշ քաղաք և աշխատում իբրև բանվոր: Սակայն այստեղ էլ նրան գտնում է Նենեթը: Ավտովթարի հետևանքով Լեսքյուրը մահացել էր, իսկ Նենեթը անդամահատվել: Նրա թևը կտրել էին, և նա վերադարձել էր Պետրոսի մոտ: Նենեթի նկատմամբ ունեցած սերը հաղթում է մյուս բոլոր զգացումներին, և Պետրոսը նրա հետ հեռանում է Տոններ՝ այնտեղ հանգիստ ապրելու համար: Նրանք սպասում էին զավակի: Փարիզյան կյանքի թոհուրոհի մեջ Պետրոսը ուշ-ուշ էր հիշում ծնողներին, ուշացնում է նամակները: Այս պահերին Պետրոսն ունենում է երկվություններ՝ զգալով իր նահանջը: Հիշում է Պոլիսը՝ իր ծննդավայրը, հիշում է մորը: Ի՞նչ կմտածեր մայրը, եթե իմանար որդին զավակ է ունենում ֆրանսուհուց, ով իր կինը չէ և անդամահատված է: «Օ՛հ,-ըսավ Պիեր խնդալով,-չեմ գրեր, լմնցավ գնաց. արդեն ըրածներես ո՞րը կգրեմ որ...»: <sup>21</sup> Կամա, թե ակամա, գիտակցաբար Պետրոսը նահանջում է ազգային ավազանից՝ ընկնելով օտար միջավայր: Սակայն Նենեթի սիրո հարցում էլ նրա բախտը չի բերում: Նենեթը կորցնում է երեխային: Երբ Պետրոսը մի քանի օրով մեկնում է Փարիզ, Նենեթը որոշում է հեռանալ նրանից, որպեսզի չխորտակի Պիերի ապագան: Վերադարձին Պետրոսը Նենեթին գտնում է մահամերձ: Պետրոսը մեծ վշտի մեջ է: Նա գրկում է Կոստանին և աղոթքի խոսքեր մրմնջում. Նենեթի մահից հետո Պետրոսը ցանկանում է արտասանել «Հայր մերը», բայց աղոթքի բառերը չի հիշում: «Հայր մեր, որ հերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, որպես և մենք թողումք մերոց պարտապանաց... Հայր մեր, որ երկինս ես. սուրբ եղիցի անուն քո, եկեսցե

<sup>19</sup>Ա. Եղիազարյան «Հայոց նորագույն գրականություն», Երևան, 2004 թ., էջ 165:

<sup>20</sup> Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982 թ., էջ 80:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 135:

արքայություն քո, եղիցին կամք քո որպես և մեք թողումք մերոց պարտապանաց...  
Թողումք պարտապանաց... պարտապանաց...-Չ'եմ հիշեր կոր, Կոստան, մեղքցիք  
ինձի, ես իմ «Հայր մերը» չեմ հիշեր կոր...»:<sup>22</sup> Կոստանը հուշում է իր թավ ձայնով, և նա  
կրկնում է ֆրանսերենով: Ամենօրյա աղոթքը Պետրոսը արտասանում է ֆրանսերեն:  
Այն աղոթքը, որը ժառանգել էր իր նախնիներից: Նա արդեն վերջնականապես դարձել  
էր Պիեր, այսինքն՝ ֆրանսիացի: Պետրոսը, որ «Հայ մերն» անգամ չէր հիշում, չէր  
կարող վերադառնալ հայկական ավագան: Նահաջը ազգային էությունից կատարյալ  
էր և ոչինչ չէր կարող անել կիսաստվերի մեջ նշմարվող մի բաղնիքի քիսա: Լսվում է  
միայն մի հի՛ն, շա՛տ հին մեղեդի: Շահնուրն ինչքան էլ փորձել է անհատականացնել  
Պետրոսին, այնուամենայնիվ, նա տիպական կերպար է: Նա օտար ավեր ընկած  
տարագիր հայն է, ով, ընդդիմանալով ուժացման վտանգին, չի կարողանում  
սահմանազատվել նահանջի հետապնդումից և օրեցօր ավելի խորն է մխրճվում  
օտարի ավագանի մեջ: Պետրոսի անցած ճանապարհը համընդհանուր է, այդպես է  
շարժվում տարագիր հայության մի ամբողջ սերունդ: Շահնուրը վարպետ գրչով է  
տվել նահանջի պատկերը: Նահանջի պատկերը ամբողջացնում է այսպես կոչված  
«Հայաստանի» պատկերը, ինչը Հրաչը գտնում է Պետրոսի սենյակից: Ապակու վրա  
պատկերված էր մերկ Նենեթը՝ ժպիտը դեմքին: Պատկերը խորհրդանշական էր: Հայ  
երիտասարդներն արդեն հեռացել էին հայության ավագանից, նահանջել: Ապրելով  
օտար միջավայրում՝ հայ երիտասարդը յուրացրել էր այդ միջավայրի բարքերն ու  
սովորույթները, ի լրումն ամենի՝ քիչ-քիչ մոռանում էր հայոց լեզուն, որն իր բերանից  
միշտ հնչել էր իբրև աղոթք: Օտարն արդեն դարձել էր հարագատ, իսկ հարագատը՝  
օտար: « Հայ աղջիկը մնաց հեռուն, մնաց լքված, ան, որ անհրաժեշտ էր մեր արյունին,  
հակառակ իր տգեղության, իր չոր հպարտության և անմիջապես մայրանալու ու  
ծերանալու հակամիտության: Ասոնք առավելություններ են ուրիշի համար, մինչև հայ  
երիտասարդ մը... Այն երիտասարդը տեսավ ֆրանսացի աղջիկը, գերմանացին,  
իտալացին, հույնը, ռուսը, օր մը անոր բույրը ծծեց, օր մը մյուսը, գիշեր մը այս  
պանդուկը մնաց, ուրիշ առավոտ մը տարբեր սաքնդուղներե իջավ, սիրվեցավ քանի մը  
անգամներ, մինչև որ ինք ալ սիրեց օր մը, դուռ մը ետևեն գոցելով»: <sup>23</sup> Դա կյանքի  
դուռն է, որը թողնում է իր ետևում տարագիր հայը: Իսկ կյանքի դուռը խորհրդանշում  
էր հայկական ավագանը: Դուռը փակելով, նա ջնջում է այն ամենը , ինչը հայկական է:  
Օտարվում է հայկական իրականությունից՝ սուզվելով մի նոր իրականություն:  
Վեպի հերոսներից յուրաքանչյուրը յուրովի է հեռանում ազգային ավագանից: Իրար  
հետ սիրով ու գորովով կապված հայ երիտասարդները քիչ-քիչ բաժանվում են  
իրարից: Ընկերներից մեկը՝ Միսաքը, առաջինն է բաժանվում: Հեղինակը նշում է.  
«Օրապահիկը շահելով հանդերձ ան հետևեցավ մեծ գոհաբերություններով  
ատամնաբուժական վարժարանի դասընթացքին ու կրցավ վերջապես վկայականը  
շահիլ: Հիմա ալ կերթա Մարսել, ուր պիտի աշխատի հորեղբոր հետ, որ հոն

<sup>22</sup> Նույն տեղում , էջ 163:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 92 :

կոշկակար է»:<sup>24</sup> Ինչպես տեսնում ենք Միսաքը Շահնուրի խոսքով՝ «կամա» նահանջող հայն է: Նա Մարսելում պիտի դառնար մի նոր ֆրանսիացի: Նկատենք, որ այսօր էլ շատ հայեր մեկնում են արտասահման՝ իրենց ուժն ու գիտելիքը ծառայեցնելու օտարին և այլևս չեն վերադառնում՝ չմտածելով անգամ, որ կարող են դառնալ իրենց պետության հզոր պոնտերը և իրենց գիտելիքները, ըստ արժանվույն, ծառայեցնել հայրենիքին, նահանջում են ողջ էությանը: Կամա նահանջող կերպար է նաև Հրաչը: Նա ամբողջ էությանը հայ էր, ատում էր փարիզյան բարքերը, ֆրանսուհիների մասին լավ կարծիք չուներ, այժմ ամուսնանում էր անբարոյական Սյուզանի հետ: Օտար ավագանի վարքուբարքի մեջ սուզված Հրաչը փոխում է իր համոզմունքները: Հրաչն ընդունում է օտարի սովորությունները՝ մոռանալով ծնողներին, մոռանալով այն ամենը, ինչը հայկական է: Իսկ հարսանեկան արարողությանը ծնողները ներկա չէին: Հրաչը նախկին ավանդապաշտ հայը չէր: Սյուզանին Պետրոսին ծանոթացնելուց առաջ ասում է. «Հավատա՛, Պետրոս, բնավ ան քու կարծած թեթևալիկներեդ չէ, շատ դժվարամատչելի. ամիսներով ետևեն եմ վազեր, որպեսզի գինքը համոզեմ»:<sup>25</sup> Երբ Հրաչը Պետրոսին ներկայացնում է իր հարսնացուին, Պետրոսի երակներում արյունը սառչում է: Պետրոսը ճանաչում էր Սյուզանին, նույն կանադացի ուսանողի նախկին հոմանուհուն, ով չէր մերժել նաև Պետրոսի առաջարկը: Սակայն Պետրոսը ոչինչ ասել չէր կարող, Նենեթը Սյուզանից լավը չէր: Հրաչը ամուսնությունից առաջ զավակ է ունենում, որ Սյուզանի ծնողները չընդդիմանան, և ամուսնանում են, որ երեխայի ծնունդը «օրինավոր ըլլա»: Երեխայի անունը Ռենե էր: Պետրոսն այլևս չի համբերում. «Չէի՞ր կրնար հայերեն անուն մը դնել,-ըսավ Պետրոս դժգոհությունն ա՛լ չկրնալով ծածկել:-Չըլլար, ճանրմ,- պատասխանեց մյուսը,- Ռենե, Սյուզանիս հորը անունն է: Նայե այս վարագույրները և մեջտեղի լամպարը ամբողջ ան նվիրեց, եթե հիմա անունը փոխենք, շատ պաղ կփախի...»:<sup>26</sup> Հրաչը հոգով և մարմնով ֆրանսիացի էր: Հարսանիքի ժամանակ հազար ու մի կենաց են խմում, Պետրոսն առաջարկում է խմել «յագմաջի Քրիսին և Ադավնի հանմին» կենացը: «Շատեր ցածր ձայնով հարցուցին «ո՞վ են, ո՞վ են»: -Հայրի՛կս...մայրի՛կս,-կակազեց Հրաչ մեկեն հեկեկալով...»<sup>27</sup> Սյուզանը իր թաշկինակով սրբում է Հրաչի արցունքները: Սա ևս իր խորհրդանիշն ունի. Սյուզանը Հրաչին կտրում է իր անցյալից, ծնողներից: Հրաչն ընկնում է մի նոր իրականություն՝ Ռենե, Սյուզան: Հրաչի նահանջը կատարյալ էր: Նահանջի գաղափարաբանությունը Շահան Շահնուրն իր վեպում հիմնականում ներկայացնում է միջնորդավորված Սուրենի կերպարով: Միջնորդավորված, որովհետև Սուրենը գլխավոր հերոսը չէ, բայց Շահնուրը լիովին նրան վստահում է իր

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 144:

<sup>26</sup> Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982 թ., էջ 146:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 147:

հայացքները: Կարելի է նշել, որ «Նահանջը առանց երգի» վեպում հեղինակը երկատված է Պետրոսի /զգացմունքայնության/ և Սուրենի /իմացականության/ միջև: Երկու հերոսներն էլ նահանջը խորապես գիտակցող անհատներ են: Սուրենը հայ ժողովրդի պատմությանը գիտակ մտավորական է, գրող, ամենից բարձր իմացականության տեր երիտասարդն է: Սուրենը գրողի գաղափարակիրն է: Նրա միջոցով է Շահնուրն արտահայտել իր մտքերն ու դիտարկումները: Վեպում Սուրենին տեսնում ենք երկու անգամ, երկու անգամ էլ նա հանդես է գալիս որպես գաղափարախոս: Խորհելով սփյուռքահայության ճակատագրի շուրջ՝ եզրակացնում է. «Մակայն մենք՝ հայության այս թերը դատապարտված ենք մահվան»: <sup>28</sup> Նա ևս գիտակցում է սփյուռքահայի ուժացման անխուսափելիությունը. «Պիտի այլասերինք ամենքս ալ, պիտի կորսվինք բոլորս ալ»: Սուրենը հայրենասեր է, գիտակցում է սփյուռքահայի նահանջը և խորապես ցավում, որ ազգի հիմնական սյունը՝ ընտանիքը, խալիվված է, որովհետև ազգային ավազանից հեռացած հայ երիտասարդը հարվածում է նրան՝ նետվելով օտար կանանց գիրկը: Ընթուստացած է հայրենասեր Սուրենը, բայց գիտակցում է, որ հաղթանակը միշտ Մանոնների, Նինոների, Նանաների թոռնուհունն էր: «Այժմ հայուհին իր հիշողությանը կներկայանար միայն երկու հաստ սրունքով և քիչ մը բեղով: Ի՛նչ փոյթ, ի՛նչ փոյթ»: <sup>29</sup> Սուրեն-Շահնուրն անհանգստացած է սփյուռքահայի համակերպվողականության, կրավորականության համար: Նա ցանկանում է, որ սփյուռքահայը գիտակցի աղետը : Իսկ այդ աղետը սփյուռքահայի նահանջն է: Ընդունելով, որ Նարեկացու «Մատյանը» ունեցել է փառավոր ճակատագիր, Սուրենն այն համարում է թունավորիչ հատոր, գտնելով, որ քրիստոնեական վարդապետության սխալ մեկնաբանության պատճառով է, որ հայ ժողովուրդը դարձել է համակերպվող, խեղդվել է նրա մեջ պայքարելու ոգին: Այդ իսկ պատճառով անհազնանում է ուժացման վտանգը: Սուրենի խոհերն արտահայտվում են իր գրքում: Ընթերցողին թվում է, թե Սուրենը հայկական ավազանին կառչած ըմբոստ ոզի է և երբեք չի նահանջի: Այնինչ ընկերների պես նահանջում է նաև ինքը: Շուտով պետք է լույս տեսնի նրա գրքի առաջին հատորը: Բայց գրքում բացակայում է ազգայինն ու ազգային թեմատիկան: Նշենք, որ գիրքը հրատարակվելու էր ֆրանսերեն: Սուրենն արդարանում է. «Պետք է ապրիմ և երիտասարդի ավյունս արժեցնեմ: Հույսերով կարելի չէ զիս օրորել, տեսա ինձմե առաջ եկող հայերը, որոնք միշտ սպասեցին լավագույն օրերու և այդ հույսով ծերացան: Իմ արվեստս չուզեր սպասել ոչ մեկ վաղորդայնի: Չեմ ուզեր ամբաստանել հայր, բայց ան ալ, զիս ամբաստանելու իրավունք չունի: Կուզեմ խոսիլ , և բնական է, որ խոսքս ուղղեմ անոնց, որոնք լսելու ատեն և փափագ ունին»: <sup>30</sup> Սուրենի ընկերը՝ Պետրոսը հիասթափված է: Չէ՞ որ երկուսով գրեթե նույն կյանքով էին ապրել և մտածում էր, որ Սուրենը իր գրքում պատկերելու է Փարիզի մայրերը նետված հայ երիտասարդների կյանքը: Պետրոսը փորձում է դարձի բերել ընկերոջը. «Գրածներդ ոչ մեկ հայու կրնան

<sup>28</sup> Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982 թ., էջ 91:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 148:



խոսիլ որքան ասեն, որ անոնց մեջ «կարոտ» բառը չկա... Այո՛, մի խնդար, որովհետև միայն այդ չէ, որ թերի է. դու արդեն գիտես, բայց թող որ հիշեցնեմ, թե ֆրանսերենը գոյություն չունի նաև «մայր» բառին, «հայ» բառին, «աքսոր» բառին... ֆրանսերենը չկա՛ մե՛ր «գաղթական»ին, մե՛ր «որբ»ին...» :<sup>31</sup> Նահանջը, սակայն, իր հորձանքի մեջ էր առել նաև Սուրենին, և այլևս դարձի ճանապարհ չկար: Նրա համար միևնույնն էր արդեն իր գրքում մեկ բառի ավել կամ պակաս լինելը: Սուրենը նահանջել էր ն՛ խոսքով , ն՛ գործով, ն՛ էությունը, ն՛ գաղափարներով: Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի» վեպում բոլորը նահանջում են, բացի Լոխումից : Շահնուրը փորձել է ստեղծել չնահանջող, նահանջի բոլոր քառուղիների դեմ ծառացող, ըմբոստացող մի հերոսի: Կարծես Շահնուրը իր ըմբոստ հերոսի՝ Լոխումի միջոցով ցանկանում է փրկության ուղիներ փնտրել: Բայց գալիքը, ինչպես նկատում ենք, տարտամ է ու անորոշ և Զարեհ-Լոխումը միայնակ չէր կարող պայքարել: Նա քահանայի որդի է, Պոլսի Կեդրոնական վարժարանի նախկին սան: Լոխում էր կոչվում «մանուկ եղած ատեն ճեփ-ճերմակ միս, կակուղ նկարագիր և քաղցր բնավորություն մը»<sup>32</sup> ունենալու պատճառով: Նա աշխատում էր Ռեճոյի գործարանում: Նա տարբերվում է վեպի բոլոր հերոսներից: Հաստատական է, դյուրագրգիռ: Լոխումը փորձում է մնալ հայ, ավելին՝ յուրայինների մեջ ձգտում է արթնացնել հայի ոգին, որը դարեր շարունակ նրան ուժ ու եռանդ է տվել ապրելու, մաքառելու և իր ազգային ինքնությունը պահպանելու: Նա հաճախ ըմբոստանում է. «Ի՞նչ, ի՞նչ,-նորեն ֆրանսերեն թերթ, նորեն ֆրանսերեն թատրոն. ատոնց հայերենը չկա: Չպիտի՞ ըլլա որ դուք սանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին. չպիտի՞ ըլլա, որ կովիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ... Մենք ալ հայրենիք մը ունինք. պետք է պատրաստ կենանք հոն երթալու... պետք է, որ ճահիճները չորցնենք, ջրանցքներ բանանք... »<sup>33</sup>: Նա սթափեցնում է իր ընկերներին, հորդորում դիմադրել, պատրաստ լինել մինչև, որ հայրենիքը կանչի: Օտար միջավայրում, չգտնելով օտարացման ու ուժացման դեմ պայքարի ուղի, Լոխումը վճռական քայլ է կատարում: Ցանկանում է մեկնել Հայաստան, նորօրյա հայրենիքի կառուցմանը մասնակցելու համար, դառնալու նրա մի մասնիկը: Ընկնում է դեսպանատների դռները: «Ռուսական դեսպանատուն է գացեր Լոխում, պահանջելով, որ Հայաստան երթալու համար իրեն անցագիր տան: Մերժեր են: Ըսեր է, թե կուզե իր հայրենիքը ապրիլ. մերժեր են: Ըսեր է, թե կուզե ճահիճներու չորացումին և ջրանցքներու բացումին համար իր բազուկները տանիլ. մերժեր են: Ըսեր է նույնիսկ, թե կուզե Արարատը տեսնել ու շնչել զայն. նորեն մերժեր են»<sup>34</sup>: Նա դիմում է թուրքական հյուպատոսարան, պահանջում անցագիր՝ մոր մոտ վերադառնալու: Դարձյալ մերժում են: Նրան ո՛չ թողնում են հեռանալ, ո՛չ էլ կարողանում է նահանջել: Ի վերջո խելագարվում է: Եթե վեպի մյուս հերոսները նահանջում են հոգով, Լոխումը

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 149:

<sup>32</sup> Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք 1, Երևան, 1982 թ., էջ 114:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 114:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 116:

կործանվում է ֆիզիկապես: Լոխումի կերպարով Շահնուրը մյուսներին հուշում է լինել սթափ ու զգոն:

Շահնուրն իր վեպում կողք կողքի պատկերել է հայ և ֆրանսիացի հերոսներին՝ Լեսքյուռ, Կոստան, Փթիթ Լիզ և դրվագային ևս մի քանի կերպարներ՝ Գի, Գաբի, Թերեզ, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են գլխավոր հերոսին՝ Պետրոս-Շահնուրին, և ճանապարհ հարթում դեպի ուժացում: Ֆրանսիացի հերոսների միջոցով Շահնուրը ցույց է տվել այն ապականված միջավայրը, որի մեջ ընկնում է սփյուռքահայը կամա թե ակամա՝ ձուլվելով, օտարանալով:

## Եզրակացություն

Այսպիսով՝ Շահնուրն իր «Նահանջը առանց երգի» վեպով սփյուռքահայ գրականությունը շրջեց դեպի ներկան: Մենք ստեղծագործության գեղարվեստական քննության կենտրոնում տեսնում ենք ֆրանսիական թոհուրոհի մեջ ընկած տարագիր հային՝ հայեցի տեսանելի և անտես բարդություններով: Շահնուրն, իբրև ականատես, քննեց, վերլուծեց սփյուռքահայի կյանքը, ընկալեց նրա առջև ծառայած վտանգը և «Նահանջը առանց երգի» վեպով գուժեց այդ վտանգը՝ միաժամանակ սթափության կոչ անելով աշխարհի չորս ծագերում սփռված սփյուռքահայությանը՝ դիմադրելու ուժացման ահագնացմանը: Շահնուրն զգում էր համազգային աղետը՝ գալիք սերունդների նահանջը: Իր վեպով աշխատում է նաև փրկության ուղիներ որոնել: Շահնուրը սփյուռքահայ գրականության մեջ առաջինն էր, որ անդրադարձավ հայրենադարձության թեմային՝ որպես հայափրկիչ ծրագիր: Փրկության մյուս ուղին Շահնուրը տեսնում էր ազգային բարքերի ու հայ ընտանիքի պահպանման մեջ, ինչը, ցավոք, օտար ավերում անհնար էր: Նահանջի ամենակուլ հոսանքը իր ճիրանների մեջ էր գցել հարազատ օրրանից արմատախիլ եղած և օտար ավեր նետված հայ երիտասարդին: Շահնուրը «Ես՝ անցյալես բարձր» կարգախոսով հուշում է, որ հայ երիտասարդը, նահանջի հորձանուտն ընկնելով, սահմանազատվել է հիշատակների բեռից, հայրենի եզերքին կառչած մնալու սևեռումից: Հեղինակը փորձեց բացել նահանջի՝ հայ գրականության համար մինչ այդ փակ, մութ ճանապարհներից մեկը. հերոսները նահանջում են ոչ միայն լեզվի և ազգային ավազանից, այլև փոխվում է բարոյական ընկալումը: Նրա կերտած հայ կերպարները ընդգծում են օտար ավազանում ապրելու, վայելքի նախապայմանը, ինչն ազգային խնդիրների հանգույցում կանգնեցնում է նոր երկվությունների առջև: «Նահանջը առանց երգի» վեպով Շահնուրը սփյուռքահայությանը կոչ է անում վերադառնալ հայկական ավազան: Շահնուրը գիտակցում էր՝ ինչքան էլ ծանր պայմաններում ապրի օտար ավեր նետված սփյուռքահայը, իրավունք չունի մոռանալու իր հայկական արմատները: «Նահանջը առանց երգի» վեպը իր ծրագրային նշանակությամբ դարձավ նահանջի գրականության հիմնասյունը:

## Օգտագործված գրականություն

1. Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1982 թ.
2. Սուրեն Դանիելեան «Միջուկի տրոհումը», Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, գիրք 1, Երևան, 2011թ.
3. Գրիգոր Շահինյան, «Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն Շահան Շահնուրի», Անթիլիաս, 1981թ.
4. «Հայրենիք», 1929, ը տարի, դեկտեմբեր, համար 2
5. Անդրանիկ Լ. Փոլատյան, «Շահան Շահնուր», Նյու Ջերսի, 2003թ.
6. Գեորգ Աճեմեան «Տեսական քննադատական փորձեր», Պէյրութ, 1962 թ
7. Շահան Շահնուր «Նահանջը առանց երգի», Դ. տպագրութիւն, Պէյրութ, 1981թ.
8. Արծրուն Ավագյան «Ազգային վարքագծի հորձանուտում», Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 3, 2000 թ.
9. Վ. Գաբրիելյան «Սփյուռքահայ գրականություն», Երևան, 1994թ.
10. Շահնուրյան ընթերցումներ, Բէյրութ, 1933թ
11. Ա. Եղիազարյան « Հայոց նորագույն գրականություն» , Երևան, 2004 թ
12. Շահան Շահնուր, Նամականի, կազմեց, խմբագրեց, ծանօթագրեց Գրիգոր Քեօսէան, ԱՄՆ, 2006թ.